

Ավագանու կողմ - 6, դեմ -0, ձեռնպահ -0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

կողմ

դեմ

ձեռնպահ

Միհ. Հակոբյան
Մ. Ալեքսանյան
Հ. Այվազյան
Մեխ. Հակոբյան
Ա. Խաչատրյան
Հ. Պողոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ - 39

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.06.2014թ. «Էլեկտրակառավարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում «Հրազդան ՋԷԿ -ը Շինուհայր ենթակայանին միացնող 220կՎ էլեկտրահաղորդման օղային գծի վերակառուցման մասին» № 599- Ն որոշման պահանջները, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի վարչական սահմաններում գտվող «ԲԷՑ» ՓԲԸ սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 05-045-0082-0011, 05-045-0080-0003 կադաստրային ծածկագրերով բնակելի կառուցապատման հողատարածքը՝ 2400 քառ.մ մակերեսով, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ՎՋՄԲ կողմից ֆինանսավորվող «Էլեկտրակառավարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ՋԷԿ -ը Շինուհայր ենթակայանին միացնող 220կՎ էլեկտրահաղորդման օղային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման համար:

2. Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

3. Ավագանու կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:

Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

կողմ

դեմ

ձեռնպահ

Միհ. Հակոբյան
Մ. Ալեքսանյան
Հ. Այվազյան
Մեխ. Հակոբյան
Ա. Խաչատրյան
Հ. Պողոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ - 40

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և ՀՀ «Հողային օրենսգրքի» 48-րդ և 81-րդ հոդվածի 3-րդ կետով տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ գյուղ. նշանակության վարելահողերից և բնակավայրի հա

կառուցապատման հողերից մրցույթային կարգով 25-տարի ժամկետով տալ վարձակալության և սահմանվող տարեկան վարձավճար 9.000 դրամ մեկ հեկտարի համար:

1. ծածկագիր 05-045-0217-0169, չափը 0.052 հա, գյուղ. վարելահող, վկայական N 16082016-05-0020.
2. ծածկագիր 05-045-0103-0048, չափը 0.228 հա., գյուղ., այլ հողատեսք, վկայական N 13092016-05-0027
3. ծածկագիր 05-045-0103-0012, չափը 0.3506 հա., գյուղ., այլ հողատեսք, վկայական N 13092016-05-0026
4. ծածկագիր 05-045-0103-0047, չափը 0.4302 հա., բնակ., հաս. կառ., վկայական N 13092016-05-0023

Ավագանու կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:

Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

կողմ

դեմ

ձեռնպահ

Միհ. Հակոբյան

Մ. Ալեքսանյան

Հ. Այվազյան

Մելիս. Հակոբյան

Ա. Խաչատրյան

Հ. Պողոսյան

ՈՐՈՇՈՒՄ – 41

Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

1.33 օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար սահմանել տեղական տուրք հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդ. մակերես ունեցող և հասարակական ու արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների համար՝ - 4.000 դրամ,

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 6.000 դրամ,

բբ) 501- 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 10.000 դրամ

բգ) 1001-ից ավել քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 15.000 դրամ

Ոչ հիմնական շինություններ տեղադրելու համար՝

գ) մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 500 դրամ,

դ) 20 և ավել քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 1.000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական, այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման աշխատանքների համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 500 դրամ,

բ) Բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմեր.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 1,500 դրամ,

4. ոգելից եւ ավլոհողային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 675 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 690 դրամ,